

1994 թվականի դեկտեմբերի 11-ի ազգային փոքրամասնությունների ընտրությունների արդյունքում հայ ազգային ինքնավարություններ առաջացան Բուդապեշտի 6 թաղամասերում, Սիգետհալոմում, Եւ Վեսպրեմում: 1995 թ. փետրվարի 19-ին ստեղծվեց 17 անդամներից բաղկացած Հունգարիայի Հայ Ազգային Ինքնավարությունը, իսկ մարտի 4-ին՝ 9 հոգանոց Բուդապեշտի Հայ Ազգային ինքնավարությունը: Նույն թվականի նոյեմբերի 19-ին լրացուցիչ ընտրությունների արդյունքում նոր հայկական ազգային ինքնավարություններ առաջացան Բուդապեշտի 4 թաղամասերում, ինչպես նաև Սեկեշֆեհերվարում, Դեբրեցենում, Դորոգում Եւ Նյիրեդյիազայում:

1998 թվականի ընտրությունների արդյունքում հայկական ազգային ինքնավարություններ ստեղծվեցին 16 մայրաքաղաքի թաղամասերում Եւ 8 Հունգարիայի տարբեր բնակավայրերում: Հունգարիայի Հայ ինքնավարությունը կազմավորվեց 1999-ի հունվարի 3-ին:

Հայ ինքնավարությունը չունի սեփական դպրոցական ցանց, բայց մի շարք բնակավայրերում հայ ինքնավարությունների կողմից հայոց լեզվի դասընթացներ են կազմակերպվում: Կիրակնօրյա դպրոցներ գործում են Բուդապեշտում, Սեկեշֆեհերվարում, Վեսպրեմում, Դորոգում, Դեբրեցենում:

Բուդապեշտում գործում է միակ հայ կաթոլիկ եկեղեցին: Հունգարիայի հայ եկեղեցական համայնքը կազմավորվել է Եւ գործում է 1924 թվականից: Հայ եկեղեցին Հունգարիայում, ինչպես Եւ Սփյուռքի այլ համայնքներում, բացի կրոնականից, կարելի է հայապահպան դեր է խաղում որպես համայնքի հայությանը համախմբող կենտրոն, որտեղ ցուցահանդեսներ Եւ հոգեւոր երաժշտության համերգներ են կազմակերպվում:

2006 թ. ազգային փոքրամասնությունների ընտրությունների արդյունքում, ներկայումս գործում են 20 Բուդապեշտի Եւ 11 այլ բնակավայրերի հայ ազգային ինքնավարություններ:

2007 թվականից գործում է Հայկական մշակութային Եւ ինֆորմացիոն կենտրոնը Բուդապեշտում:

Հունգարիայի հայ ազգային ինքնավարությունը սերտ կապեր է պահում մայր Հայաստանի Եւ հայկական Սփյուռքի համայնքների հետ: